36. ԳԱՌՆՈՒԿ ԱԽՊՈՐ ՀԵՔԻԱԹ

Կէղնի, չէղնի մարթ մե, կնիկ մե, ուրին ախչիկ մե, տղե մե։

Էղ էրեխեսթներու մամ կմեռնի։ Ըդըցա պապ լէ կէրթա ուրին ուրիշ կնիկ մե կբերե։ Էդ կնկա հետ լէ ախչիկ մե կէղնի։

Գելնան գարուն։ Գիդա ցանքի ժուք։ Էդ մարթ կէրթա ցանք կէնե, էդ կնիկ լէ սերմի ցորեն կխարկե ու գըլնա փեթակ։ Էդ մարթ էդ ցորեն կտանե կցանե։ Կցանե, կցանե, ցորեն հեչ չբուսնի։

Էդ կնիկ լէ կըսե ուր մարթուն.— Գնա, ճաղճի նավ, հարցու, ըսե թե՝ «Արտողիկ ցորեն կցանիմ, չբուսի». հանդե ընի քըղի ջուապ դիտա, դու դիդաս, ինչ օր ըսեց, դու էկար էնեցիր, հանդե քու ցորեն կբուսի։

Էդ մարթն է, օր էդ խսեն կլսե, գելնա կէրթա։ Կնիկ լէ շուտ կէրթա քընց մարթ, կէրթա մտնա ճաղճի նավ։ Մարթ կէրթա կկանի ճաղճի նավին վրեն, կհարցու, կըսե.

— Արտողիկ, ցորեն ցանիմ չբուսնի։

Կնիկ լէ նավի մեջեն ծեն գիտա, կըսե.— Գնա՛, քու տղեն տար արտի մե գլոխ մորթե, ախչիկ լէ՝ մեկ գլոխ, նորեն քու ցորեն կբուսնի։

Էդ մարթ օցքի կդառնա հ՚իգա։ Էդ կնիկ էլման քընց էդ մարթ հ՚առեճ գելնա հ՚իգա։ Էդ մարթ գիգա տուն։

Ըդրա կնիկ կհարցու ուր իրկան մոտեն, կըսի։

— Ըսկի ի՞նչ ըսեց։

— Ըսեց, գնա՛ քու ախչիկն ու տղեն ամեկ արտի մե գլոխ մորթե, հանդե քու ցորեն կբուսնի։

Կըսե.— Մա՛րթ, առ զախչիկն ու տղեն գնա արտ, ես չախուն կսրիմ ու կառնիմ հ'իգամ։

Կմնա կեսօրին, կնիկ կառնի զչախուն ու կոտիկ մե ճմուռ ու հաց մե, կէրթա։ Կտանե գիտա ճժերուն։ Ճժեր կնատին հաց կուտին, ճնճուղ մե էն դհուց գիգա, կըսե.

— Ճիլի վիլի, ճիլի վիլի, պրտուռ մե ճմուռ տվեք ընծի, ծըղի բարի խարար մե գիտամ։

Տղեն կըսե.— Իդա էղավ տարի մե, օր մեր մամ մեռեր է, մենք ճմուռ չկերեր ինք, էս փշուր լէ իդանք քըզի՞։

Քուր լէ կվերցու, կըսե.— Ախպեր, փշու մե իտանք էդ ճընճղուն, տեսնանք էդ ճնճուղ մըզի ի՞նչ կըսե։

Կվերցու քուր, պրտուռ մե գիտա ճնճղուն։

Ճնճուղ կըսե.— Ելեք գացեք, հանդե ծեր մամ ու պապ չտխուն կսրին, օր իգան ծըղի մորթին։

Հմա հ'ոցքի գելնին ու կէրթան։

Ախպեր էդ հաց օր կերեր էր՝ շոռ էր էղի, ծարվըցեր էր։

Կըսե.— Քո՛ւր, ես ծարվըցեր իմ, ըդա գոմշի օտաց տեխի ճուրը խմիմ։

Կըսե.— Ախ, ախպեր, գելնիս գոմեշ, կկռկռաս, չըմ կրնա քըզի տանիմ։

Գիգա ծիու մը օտաց տեխ։

Կըսե.— Ա՜խ, քուր, ծիու օտաց տեխի ճուր խմիմ։

Կըսե,— Ա՜խ, ախպեր, կէղնիս ծի, կխրխնջաս, քըզի չըմ կըրնա տանե։

Կէրթան, գիգան խրղաչ խոչու օտաց տեխ, կկզի վրեն, ճուր կխմի։ Կէղնի էգ գախ, աստծու խրամանքով, խրղաչ խոչ մի։ Քուրն է գիլա, թել մե կթալի վիզ, ու գիլա, խոչ լէ կբոբռա ու կէրթան։

Շատ կէրթան, քիչ կէրթան, թագավորի մե քաղքին ռաստ գիգան։

Քուր խըռշ ու մըռշ կժողվե, ուրին տունտուլիկ մե կշիքե, ինք ուր ախպեր կմտու մեջ, ինք կնստի խեչ։

Էդ քաղքի թագավորի տղեն լէ գելնի կէրթա նեճիր, ըդրա տա-

ժիկ կէրթա էդ տունտուլկի վրեն կհաճա։ Թագավորի տղեն քշի զծին կէրթա կկանի վըր էն տունտուլկին։

Կըսե.— Դուն ի՞նչ ես, ծեն տուր, թե չէ՝ կղարկիմ քըզի։

Ախչիկ դիլա, կըսե.— Ես, իմ ախպերն ինք։

Թագավորի տղեն կըսե.— Էդ խոչ մե, հ՚որի՞ քու ախպերն է։

Կըսե.— Ծարավ էր, էկավ ճամբախ խոչի օտաց տեխի ճուր խմավ, էղավ խոչ։

Թագավորի տղեն իդոցկի կառնե, դիգա, կբերի կփսակե զախչիկ վըր ուրին, կէնե ուրին կնիկ։

Էդ ախչկա խորթ մամ լէ կլսե օր էդի առի թագավորի տղեն։

Օցկի կառնե զուր մեկել ախչիկ ու գիգա։ Գիգա թագավորի տուն։ Քենիմ օր կմնա, կառնե զթագավորի կնիկ ու կէրթա հավուզ։ Բռոշ (պղինձ) կբերե ջրեր եռցու, ու ախչիկ կտկլողցու, կառնե զէրկրթե սանդր, գըլնա եռման ճրեր վըր ախչկա գլխուն, չէ՞ օր խորթ ախչիկն էր։

Էդ ախչիկ կըսե. «Էյ, տեր աստված, դու ընծի էնիս էրկու բարդի ծառ»։

Ախչիկ օր հըմալ կըսե, աստծու խրամանքով կէղնի էրկու բարդի ծառ, մեջ հավուզին գելնա։

Ընդրա մամ լէ ուրին ախչիկ կխադու, կխփու կտանե գիտա թագավորի տղին։

Էդ ախչիկ օր կէրթա թագավորի տղի խեչ, տղեն կըսե.

— Էդ հ՚որի՞ էղավ գիշատես, ըդի ավալ խորոտ էր։

Մամ լէ կըսե.— Տարա գլոխ լվացի, քեշրցավ։

Էլ թագավորի տղեն ծեն չի տա։ Կդինա թը ուր ավալու կնիկն է։ Էդ կնիկ դորիս կմնա էրկու հուդով։ Ինն ամիս օր կթըմմի, կպառկի, կբերե տղե մե։

Իդոդկուն էդ կնիկ կըսե.— Պըտի էրթաք էդ հավուզի էրկու բարդի ծառ կարիք բերիք, ես էնիմ իմ տղին օրորոց։

Կէրթան կկտրին բարդի ծառ, կառնին հ՚իգան, կբերին կշիքին օրորոց։

Էն ախչիկ օր էղեր էր բարդի ծառ, դորիս կէղի հ՚ըմե մե տաշեղ, կպատի ական մեջ։ Էդ տաշեղ լէ ճրագի պես կվառի։

Էդ դրկցի կնիկ լէ գիգա թագավորի տուն կրակի, կտեսնա օր բան մե ական մեշ կփլփլա, կկզի, կվերցու, կտեսնի օր տաշղի մե կտոր մե։ Կվերցու, կբերե կդնե ուր աշկունք (պատուհան)։ Էդ կընիկ ուր դուռ կփակե։ Կդառնա հ՚իգա կտեսնա օր հանդե ուր տուն խորդուկ, ավլուկ սրպուկ է։ Իդոդկուն կնիկ կպալգվի, կըսե. «Կա-

նի պալդվիմ տեսնամ, էդի ո՞րն ա իմ տունն։ Կտեսնա օր էդ աշ-
կունքեն ըդ տաշեղ կպատի դետին, կէղնի խուռնիկ-խրեղեն ախ-
չիկ մե։

Ախչիկ կէլնա աշկունքեն, կավլե, կխորդե, ամեն բան կպատ-
րաստե, դելնա աշկունք օր էլման էղնի տաշեղ, էդ պառավ կհաս-
նի, կբռնե դախչիկ։ Ջախչիկ օր կբռնե, սեյր կբաթլի։

Պառավ կըսե.— Ես հեչ ավլադ թավլադ չունիմ, դու լէ արի
էղի ընձի ախչիկ։

Ախչիկ կըսե.— Թըխ էղնի։

Էն ախչիկ ուր ծեռներ կլվա, կէղնի ալուր, ուր քիթ ու բերան
լէ կլվա՝ կէղնի ծավար ու բլղուր։ Էդ պառավ ու ախչիկ ուրանց
կապրին հարի աշուն։

Աշուն լէ թագավորի տղի ծիանք կցրվին վըր տներուն փուտ։

Էդ ախչիկ կըսե պառվուն։

— Գնա, ըի ծոռոտ քուռակ մե, ես կպահիմ։

Կըսե.— Լաո՛, մըզի նա հ'երթ կա, նա խոտ կա, մենք ինչո՞վ
պահինք։

Կըսե.— Ի՞նչ լախա ունիս, գնա առ էգո, ես կպահիմ։

Էդ պառավ լէ, գելնա կէրթա, կառնե թագավորի տղի ծոռոտ
քուռակ մե գիգա։ Կբերե տուն, կկապե տան մե ղին։

Էդ ախչիկ օր ծեռներ կլվա՝ կէղնի առվուտ ու գորընգան, ուր
քիթ ու բերան լէ կլվա՝ կէղնի ճուր, էդ ծին կխմե։ Էդ ծին լէ հըմալ
կխլավնա օր էլ չի շահվի, հմալ կէղնի աշարի։

Կմնա հարի գարուն։ Թագավորի տղեն ծիանք կժողվե։ Հ'մեն
ծիանք կքոմվին, կմնա պառվու տան ծին։ Հ'մեն կքոմվին, կծիծ-
ղան, կըսին. «Մկա պառվու տան քուռակ փիծեր ա»։

Թագավորի տղեն լէ կըսե.— Գացեք, էկեք տեսնանք հալա
սա՞խ է, թե՞ փիծուկ։

Կէրթան դուռ օր կբանան, ծին օր կտեսնան, չեն իշխնա մո-
տենա ծիու։

Էդ ախչիկ լէ ծիուն կըսե.— Օր քըզի տարան, էլնիս վըր շեմ-
քին չոքիս, քաղաք-քաղքով իգան, դու չէլնաս կանիս, ես օր էկա,
էմլա խթեցի քըզի, դուն էլնաս կանիս։

Էդ տեխեն կառնին զծին, գելնան շեմքի վրեն, ծին կչոքի,
քաղաք-քաղքով գիգան, ծին չելնե կանի։ Ախչիկ գիգա էմլա
կխթի ծիուն, կըսե.

— Քու տեր բեբախտ, դուն լէ բեբախտ, էլի կանի։

Ծին կանավ, առան զծին գացին։ Գացին, ճամփու օրթալաղ մեկ լէ ծին նստավ։ Ծին նստավ, էլման քաղաք-քաղքով էկան, էլման ծին չկանավ։ Ախչիկ օր էկավ, էլման ծին խթեց, ըսեց.

— Քու տեր բեբախտ, դուն լէ բեբախտ,— հմա ծին գելնի կկանի։

Կառնին օցկի ծին ու կէրթան թագավորի տուն։ Կտանին թագավորի շեմքի վրեն, մեկ լէ ծին կնստի։ Էլման քաղաք-քաղքով կթափին, էլման էդ ծին չելնա կանի։ Կըսին թե՝ «Գացեք պառվու ախչիկ խանչեք»։

Պառվու ախչիկ դիգա, կզարկե, էլման կըսե.— Քու տեր բեբախտ, դուն լէ բեբեախտ,— ծին էլման կկանի։

Էգտեղ թագավորի տղեն լէ դընգնա մեշ մառախին. կըսե. «Ջանըմ, էդ ի՞նչ է օր էդ իրեք հաղ ծին նստավ, քաղաք-քաղքով թափտվ, ծին չկաներ, էդ ախչիկ օր գիգեր կըսեր. «Քու տեր բեբախտ, դուն լէ բեբախտ», էնի դելներ կկաներ։

Թագավորու տղեն է, ինչքան էդ քաղքի մեջ ախչիկ կա, կքոմե, կտանե ուր տուն բուրթ գգին։

Կըսե.— Գացեք պառվու ախչիկ լէ բերեք։

Կէրթան կառնին պառվու ախչիկ դիգան, ու թագավորի տղեն գիգա նստի մեջ ախչիկներուն, կըսե.

— Ախչիկ, ընծի հեքիաթ ըսեք.

Ախչիկներ հ՚ըմեն հեքիաթ կըսին։ Դեոր դիդա կհասնի էդ պառվու ախչկան։

Պառվու ախչիկ լէ ուր դլխու էկած խսա կենա իմալ օր ես քըզի ըսեցի, էն լէ թագավորու տղին հեքիաթ կըսե։

Էդ գիշատես ախչիկ լէ, ուր մամ էդա տեխն ին, կեսա.

— Սեավո՛ր, էդ ի՞նչ խսա ի կէնիս, էդի մ՚էնե, ուրիշ մե էրե։

Թագավորի տղեն օր կլսնա ղհեքիաթ, դորիսի կըսե. «Էդա իմ հ՚առեի կնիկն է»։

Գելնա էրկու ծի կբերե, էդ գիշատես ախչիկն ու մամուն էրկուսի ծամեր կկապե ծիանու պոչին ու կթորկե սար ու ձոր, ընդոնք կէղնին փշուր-փշուր, կդառնան ծիանք գիգան, ծիանու պոչին մազեր կմնա։

Իդոդկուն թագավորու տղեն գելնի նորից յոթ ձեռք դհոլ ու զուռնա կզարկե, թաժա կփսակվի։

Ըդոնք հասան ուրանց մուրազին, դու լէ հասնիս քու մուրազին։ Աստծուց պատավ իրեք խնձոր, մեկ՝ գրողին, մեկ՝ ըսողին, մեկ լէ՝ լսողին։